




ՊԱՏ. 13. - Ամիր Ս. Փրկիչ եկեղեցին, հայկական կոթողիկոսական միջնադարյան նմուշ մը. - Նկեղեցին շրջապատող ծածկոցը վերցուած է և կամ առկա միջոց վերածուած է որմերուն փակած սրնաշարքի մը:

ques) հետքը կը տեսնենք օրինակ՝ Ամիր Ս. Փրկիչին վրայ, ուր portiques-ին սրնները եկած փակած են կոթողիկոսական վրայ կազմելով նորը որմազարդ մը:

Ներդաշնակութեան տեսակետով բնական է Չուարթնոցը՝ կը տեսնենք թէ ան կառուցուած է հայկական կղզոյթի համեմատ:

Չուարթնոցի յատակագիծին ներդաշ-

նակ գիծը այս մասին ոչ մէկ տարակոյս կը ձգէ: Աւերոյժ շէնքը կը պարփակուի բառակուսիի մը մէջ: Այս բառակուսին՝ չորս հակայ մոյթերու կեղծանքն է, անցնող առանցքն է, բէն կը բաժնուի ինը ուրիշ բառակուսիներու: Այս առանցքները կը բաժնեն մեծ բառակուսիին կողմերը, հայկական ներդաշնակութեան յայտարար ՎՃ-ի համեմատութեամբ:

Եթէ բազմաթիւնը Չուարթնոցի ներդաշնակ գիծը արեւմտեան այս ձեւի շէնքերու ներդաշնակութեան յայտարարներուն հետ, պիտի տեսնենք թէ այս վերջին շէնքերուն մէջ ներդաշնակութիւնը Փ-ի համեմատութեան վրայ է (Սան Սթեֆանոյ Ռոմանոսայ, Բանթէն) մինչդեռ վիստայի տաճարը կը ներդաշնակուի Պիլիպոսիան հնգեակով (պատ. 2):

Չուարթնոցի ներկայացուցած այս տարբերութիւնը, ազդեցոյց մըն է որ ան իրապէս հայկական ոճի ծնունդ է:

Եւ անկիւ շատ բնական է, քանի որ բուն Չուարթնոցը խաչաձեւ եկեղեցին է և մենք տեսնենք նախորդ յօդուածով⁽²²⁾ որ խաչաձեւ եկեղեցիները կը ներդաշնակուին առաջնորդ բառակուսիով մը, որուն հայկական յայտարարը ՎՃ-ն է:

Այսպէս՝ Չուարթնոցը, հայ հարա-

(22) Բազմավէպ 1948, թիւ 1-2.

րապետութեան օտար իր տեսքով՝ մեզ կը ներկայանայ որպէս զուտ հայկական շէնք մը: Այս է որ մեզի իրաւունք կու տայ զայն նկատելու որպէս մեր հարաւորապետութեան զուլիս գործոցնէն մին:

Չուարթնոցի քերթարակուն կառուցուածքի մասին խօսելը, զփրախտարար զուլիս կը մնայ մեր ծրագրէն, սակայն յարմար առիթով մը ատոր վրայ ալ պիտի խօսիմ, որովհետեւ այդ մասին ալ սխալ կարծիքներ գոյութիւն ունին:

(Շարունակելի)

Ճարտ. Ս. ՃԵՎԱՆԻՐՃԵԱՆ

անգամ զուլիսերական
հարաւորապետ ծրագրադէտներու
միութեան:

ԱՄԵՐԻԿԱՆԱՅ ԳՐՈՂ.

ԱԻԵՏԻՍ ՏԷՐՈՒՆԵԱՆ

Եթէ հարց տրուի թէ՛ վերջին տասնեակ մը տարուան ընթացքին, ո՞վ է Ամերիկայի մէջ ամէնէն շատ լսուած անունը, անվարան պիտի պատասխանէինք՝ Ճան Ռոյ Քարլսըն, որուն իսկական անունն է Ալեաթիա Տէրունեան:

Ամերիկայի հարիւր յիսուն միլիոն բնակչութեան միայն փոքրիկ մէկ կոտորակն է որ թերեւս չէ լսած հռչակաւոր հայ գրողին անունը օտարի վրայ, կամ թերթերու մէջ:

Անկիւ միակ հայն է, որուն անգլիերէն մէկ հրատարակութիւնը՝ Ընտրութիւնը, այս երկրին ամէնէն շատ տարածուած եւ ամէնէն շատ վիճարանուած գրքերէն մին զարձաւ, աւելի քան 900,000-ի անհաւատալի սպառում մը ունենալով եւ հեղինակին համար ազատութիւնով անհուն փառք եւ ահագին հարստութիւն:

Կարելի է ըսել՝ թէ Ալեաթիա Տէրունեան Ամերիկայի ամէնէն ժողովրդական ու նոյն ատեն ամէնէն սիրուած մարդերէն մին է,



Ալեաթիա Տէրունեան

որովհետեւ անոնք որ ժողովրդապետա-կան, զեմոկրատիկ սկզբունքներուն կը հաւատան՝ իր բարեկամներն են, իսկ անոնք որ թշնամիներ են աղատութեան եւ եղբայրութեան սկզբունքներուն, թշնամիներն են նաեւ մեր հայազգի ծանօթ հեղինակին, որուն անունն ու համբաւին արժանանցները հասան մինչեւ եւրոպական ցամաքամասին ափերը:

Եւ Ալեաթիա Տէրունեանը ճանչնալու պատեհութիւն ունեցայ ապէ՛ք մօտաւորապէս տասնեակնոց տարի առաջ, Նիւ Եորքի Ամերիկեան դատարաններէն մէկուն մէջ: Ամերիկահայոց Առաջնորդ Ղեւոնդ Նպս Գուրեանի սպաննութեան յաջորդող օրերն էին: Յուշումնայորդ ու հետաքրքիր հանդիսականներու ներկայութեամբ խոնուած դատարանը կ'երթայի ամէն օր, դատավարութիւնը նկարագրելու համար Նիւ Եորքի մէջ հրատարակուող Բանուոր օրաթերթին համար, որուն խմբագրական կազմին անդամներէն մէկն էի, իսկ Ալեաթիա կը ներկայացնէր Արմէնիէն Միքոթ Սրէքա-քոթ շաբաթաթերթը, որուն լրագրող ու կարող աշխատակիցներէն մին էր այն ատեն:

Պատանեկան երեւոյթով, դրեթէ խրո- նոտ, մեղմիկ ձայնով ու նուրբ շարժում- ներով իր քսան եւ երեք տարիներուն ան- համապատասխան լրջութեամբ ու բանա- ստեղծական քնքշութեամբ երկտասարդ մըն էր: Ոչ ոք կարող էր կռահել այն ատեն, որ դրեթէ անձանթ ու անանուն այդ երկտասարդը, այդ օրերուն իսկ, ծը- րադիրներ կը մշակէր իր հետախուզական աշխատանքներուն եւ ապագայ գրքերուն համար, որոնք ամբողջ Ամերիկան իրմով պիտի զբաղեցնէին տարիներով:

Դուրեանի դատաւարութեան յետոյ, որ վեց շաբաթ տեւեց, յաճախ առիթը կ'ու- նենայի հանդիպելու Պր. Աւետիս Տէրու- նեանին, որ վերոյիշեալ շաբաթներէն հետ իր աշխատակցութիւնը պահեց շահե- կան խմբագրականներով, տեսակցութիւն- ներով եւ յօդուածներով: Անիկա 1932ին աւարտած էր Նիւ Եորք համալսարանի լը- րագրութեան ճիւղը եւ Քոլումբիա համալ- սարանին մէջ կը հետեւէր յաւարտ չընթա- նաւարտութեան դասընթացներու: Յաջո- դած էր մինչեւ այդ շաբաթը պատմութեանը ներ, յօդուածներ եւ ուսումնասիրութիւն- ներ ծախել ամերիկեան հանդէսներուն. ան կոկիկ դուժար մը ապահոված էր նոյնպէս Դուրեանի սպաննութեան պարագաներն ու հռչակաւոր դատաւարութիւնը յօդուածի ձեւով ծախելով դադարի ոստիկանական լայն տարածականութիւն ունեցող, հրա- տարակութեան մը՝ Նիւ Եորքի մէջ:

Ժամանակ մը Պր. Տէրունեան իր կա- պերը բոլորովին խղեց Մերրըր Սիւեթ-Էյ- քըրի հետ եւ հրապարակէն քաշուեցաւ: Անգամ մը միայն նամակ մը ստացայ իր- մէ, հարցարանի մը հետ, եւ հետագայով ալ շաբաթ մը հարցումներ ուղղեց ինձ՝ հայ քաղաքական կազմակերպութեան մը մա- սին: Այնուհետեւ ալ չլսեցի իր ձայնը:

Օրին մէկն ալ ահա լոյս տեսաւ իր հան- րածանօթ գիրքը՝ Ընտրութիւնը, որ ար- գիւնք էր տարիներու հետախուզական աշխատանքին: Դեմոկրատի թշնամին - րուն մերկացման տեսակէտէն սեւէ գիրք Ամերիկայի մէջ այնքան ազդեցիկ չէ հա- նած եւ այնքան խորունկ ազդեցութիւն չէ ունեցած որքան վերոյիշեալ գիրքը: Պատ- ճառն այն էր որ Պր. Տէրունեան, սովո- րական իմաստով, երեւակայական գիրք մը չէր որ արտագրած էր, այլ անիկա հա- սարակութեան կու տար գիրք մը որ տա-

րիներու խուզարկութեան, վտանգաւոր ու արկածախնդրական ծրագրերնու, եւ արք- նաջան ու նախաձեռնող ուղիով յազեցած աշխատանքի արդիւք էր:

Հայազգի, երկտասարդ գրողը առաջա- դրած էր հրապարակ հանել Ամերիկեան հանրապետութեան, ժողովրդասպետական կարգերու եւ ազատութեան ամէն կարգի երեւելի ու աներեւելի թշնամիները, նա- ցիկան, ֆաշիստական, յետադիմական ամէն տեսակ խմբակցութիւններ ու կազ- մակերպութիւններ, որոնք պատերազմի նախորդող տարիներուն, զանազան բարի, շիտթեցուցիչ եւ քողարկուած անուններու տակ կը վխտային Ամերիկայի մէջ ծայրէն միւսը: Պր. Տէրունեան կը յաջողի անգա- մակցիլ Գերման-Ամերիկեան Պանֆի, Բու- Քլուֆ Քլամի, Արծաթ-Է շապիկաւորներու նման տառնեակներով կարմակերպութիւն- ներու, որոնց բուն նպատակն էր ատելու- թիւն սերմանել, խտրականութիւն քարո- ղել եւ տկարացնել զեմոկրատական կար- գերը, կը ստանձնէ պատասխանատու պաշ- տօններ եւ վերջ ի վերջոյ կը հրապարակէ իր զգայացունց գիրքը, որ անուններու, հասցէներու, վաստակութիւններու անհր- քելի ու կոթողային աշխատասիրութիւն մըն է:

Գրքին յաջողութիւնը անմիջական եղաւ: Քանի մը ամսուայ ընթացքին արդէն անոր սպասումը կտրուած էր ամէն մրցանիչ, ա- լելի քան 900,000 ընթերցողներու ձեռքն հասած ըլլալով: Ամերիկացի ծանօթ ու- տիոյի վերձանող Ուոլթըր Վիւնթըլ, աստի- յի միջոցաւ դայն յանձնարարեց իր աւելի քան 26 միլիոն ունկնդիրներուն եւ ամի- աներով շարունակեց Տէրունեանին անունը ժողովրդականացնել, իրրեւ հայկական ծնունդով Ամերիկացի մը, որ խոշորագոյն ծառայութիւնը կը մատուցանէր իր որդե- ծառայութիւնը Ուոլթըր Վիւնթըլի օրինա- ներ հետեւեցան Ուոլթըր Վիւնթըլի օրինա- ներ: Աւելի քան յետոյ օրաթերթեր սկսան կրն: Ընտրութիւնը հրատարակել իրրեւ թեր - թօն: Տառնեակներով թերթեր լրագրող- ներ զրկեցին Պր. Ա. Տէրունեանի հետ տեսակցութիւններ ունենալու համար: Ռատիո-կայաններ, եկեղեցիներ, Եան- քներ, կանանց մշակութային կազմակեր- պութիւններ, հրէական, սեւամորթներու, Ամերիկեան եւ օտարազգի հարիւրաւոր ընկերակցութիւններ հրաւիրեցին զինքը

դասախօսելու եւ կարճ ժամանակէն ծան- Ռոյ Քարլսըն դարձած էր ժողովրդական, հանրածանօթ դէմք մը: Մինչեւ հիմա ա- նիկա աւելի քան 300 դասախօսութիւններ ըրած է երկրին մէջ ծայրէն միւսը:

Հայազգի գրողը միակ հայն է որ ար- ժանացած է իր մասնակցութիւնը բերելու Information please, town meeting of the air, Author meets the critic, և March of time աստիոյի յայտարարնե- րուն, միլիոնաւոր ունկնդիրներուն հետ չփման դալով եւ հայու անունը ծանօթա- ցնելով բովանդակ Ամերիկեան աշխարհին:

Ամերիկեան կառավարութիւնը դնահա- տելով երկտասարդ Հայազգի հեղինակին զործին կարեւորութիւնը, զինքը հրաւի- րեց, ամբողջ պատերազմի տեւողութեան, դասախօսութիւններ տալու, Ամերիկեան Բանակի Տեղեկատուութեան եւ դաստիա- րակութեան բաժանմունքի հովանաւորու- թեան տակ եւ անիկա այցելեց հարիւրաւոր բանակակետեր, հիւանդանոցներ եւ հայ- րենասիրական հաւաքոյթներ եւ շարունա- կեց ներքին քշմամիները մերկացնելու իր աշխատանքը:

Անցեալ տարուայ Ապրիլ 13ին Պր. Տէ- րունեան արժանացաւ իր ասպարէզի մե- ծագոյն փառքին երբ Անթոյապոլսեան դէմ պայքարող խորհուրդը զինքը պատ- ուեց Թամըս ձէֆէյքսընի պատուանշա- նով, նոյն յայտագրով պատուելէ յետոյ Տիկ. Էլիւնոր Ռուզվելթի, նախկին կառա- վարիչ Էլլիս Արնոլդի, նշանաւոր երգիչ Ֆրէնք Միլնադայի եւ ծանօթ հրապարա- կազի Տրիւ Փերսընի նման աջքանու դէմ- քեր:

Հայազգի հեղինակը անցեալ տարուայ սկիզբները հրատարակութեան տուաւ իր երկրորդ գիրքը, որ կը կոչուի Տիկ Փլոք- քըրս, Դաւաղիքները եւ իր նախորդին նը- ման կը շարունակէ մերկացնել երկրին եւ ազատութեան թշնամիները: Երեւոյթնե- րէն դատելով, այս գիրքը եւս կը խոստա- նայ գտնել վիթխարի յաջողութիւն մը, եւ մինչեւ հիմա երեւցած տառնեակներով զրախօսականները կը վկայեն՝ թէ Պր. Տէրունեան ամերիկեան լրագրական եւ հե- տադատական աշխարհին մէջ իրեն արդէն իսկ ապահոված է անկորնչելի տեղ մը, որ նոյն ատեն Սարոյեաններու, Սիւրմէ- լեաններու, Մամուլեաններու, Թորթըթ - Էաններու, Սոս Մէլիքներու ու Փուշման-

ներու կարգին հայու անունը կը պանծացնէ յաշտ բովանդակ աշխարհի:

Երբ վերջին անգամ առիթն ունեցայ ան- ծամը տեսնուելու Պր. Աւետիս Տէրունեա- նին հետ, Ֆիլատելֆիոյ մէջ, իմացայ որ անիկա կը պատրաստուէր, Մի- ջազգային իմաստով, խոշոր աշխատասի- րութեան մը եւ այս յօդուածին պատրաս- տութեան ժամանակ հռչակաւոր հայ հե- ղինակը Յունուար 23 թուակիր նամակով մը ինձի կ'իմացնէր՝ թէ շուտով ճամբայ պիտի ելլէ դէպի Եւրոպա նիւթեր հաւա- քելու իր յաջորդ գրքին համար:

Կը յուսամ որ, կը յայտնէ Պր. Տէրու- նեան, օր մը վերջ պիտի գտնէ կազմա- կերպուած առեւտրութիւնը եւ աշխարհի վը- րայ պիտի տիրէ մարդկային եղբայրու - թեան սկզբունքները:

Հակառակ այն իրողութեան, որ Աւե- տիս իր Իգմիրցի ծնողներուն հետ Ամե - րիկա եկած է տառնեկու տարեկան հա- սակին մէջ, ատու հանգերձ անիկա չա- փազանց կը սիրէ հայերէն լեզուն ու կը փորձէ իր մայրենի լեզուն խօսիլ հայկա- կան շրջանակներու մէջ, հակառակ անոր որ ստիպուած է անգլիերէնի միջամտու- թեան զիմել իր մտքերուն պարզարանու- թեան համար:

Անիկա սերտօրէն կապուած է իր ժո- վուրդին հետ եւ իր դտած միջազգային յաջողութիւնները ո'չ միայն չեն կրցած զինքը շփացնելով ուժացնել մեր Մայր Հայրենիքէն, ընդհակառակն, անիկա հը- պարտութեամբ ու ջերմեանդութեամբ կը սիրէ մեր վերածաղկող սքանչելի Հայրե- նիքը:

«Իրաւամբ մենք պէտք է հպարտ ըլ- անք, ըսաւ ան Ֆիլատելֆիոյ մէջ խօսե- լով Հայաստանի տօնակատարութեան հա- մար հաւաքուած ժողովի մը առջեւ, հայ ըլլալով եւ սիրելով Մայր Հայրենիքը՝ Հայաստանը, որուն հարազատ դաւակ - ներն ենք, նոյնքան հաւատարմութեամբ սիրելով հանդերձ մեր որդեգրած երկրորդ հայրենիքը, որ մեզի տուաւ ապահովու- թիւն եւ ազատութիւն»:

Ծնորհիւ Տէրունեաններու՝ այսօր Հայ անունը հպարտ շեշտելով կը հնչէ ամե- րիկեան աշխարհի մէջ:

Եւ մենք հպարտ ենք մեր Տէրունեանով:

Ֆիլատելֆիոս

ՅԱՆՈՐ ԳՈՅՈՒՄՃԵԱՆ